Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
«____»_____ 2016 թ.
Պետական գրանցման համարը _____
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
_____ Ա. Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«14» մարտի 2016 թ. N 28-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N 59-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի մայիսի 15-ի «Սուբսիդավորման ենթակա աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի տեսակները և դրանց սուբսիդավորման չափերը հաստատելու մասին» N 59-Ն հրամանով հաստատված հավելվածի 11-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

11	Կարտոֆիլ	22,7	220	170

»:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար Ն. Գրիգորյանին՝ սույն հրամանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

Ա. ՄԽՈՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N 59-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14 -Ի N 28 - Ն ՀՐԱՄԱՆԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Սույն հրամանի ներկայացումը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի մայիսի 15-ի N 59-Ն հրամանով հաստատված սուբսիդավորման ենթակա աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի սուբսիդավորման չափերում փոփոխություն կատարելու անհրաժեշտությամբ, ինչը կնպաստի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքում գարնանացան մշակաբույսերի տեսակարար կշռի, ինչպես նաև աշնանացան և գարնանացան մշակաբույսերի արտադրության ծավալների ավելացմանը:

Ա. ՄԽՈՅԱՆ